ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «12» դեկտեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 57-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ. օգոստոսի 28-ի N 1064-Ա/2 հրամանը, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի 2018թ. հոկտեմբերի 9-ի N 44-Ա/Ք հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2018թ. դեկտեմբերի 10-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2018 թվականի դեկտեմբերի 1-ից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի
2018 թ. դեկտեմբերի 12-ի N 57-Ա/Ք հրամանի

Ց Ա Ն Կ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	Բնագավառ, մասնագիտություն	Կազմակերպություն
1.	18DP-2B008	Բեգոյան Կառլեն Վարդգեսի	Դիտման, տեղայնացման և քարտեզագրման համակարգով համալրված ուղղաձիգ վերթռով և վայրէջքով հիբրիդային անօդաչու թռչող ապարատի մշակում և լաբորատոր նմուշի պատրաստում	Ճարտարագիտություն և տեխնիկա: Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
2.	18DP-2E009	Մկրյան Գևորգ Գուրգենի	Հեքսոգենի սինթեզման տեխնոլոգիայի մշակում և թռիչքային կայանքի ստեղծում	Ճարտարագիտություն և տեխնիկա: Քիմիական տեխնոլոգիաներ	«ԱՐԻԱԿ» կիրառական քիմիայի ինստիտուտ ՓԲԸ
3.	18DP-1C003	Սարգսյան Տիգրան Կառլոսի	10 Հերց հաճախությամբ հեռաչափի համար դիոդային մղումով լազերի փորձնական նմուշի մշակում	Բնական գիտություններ: Ֆիզիկա և աստղագիտություն	ՀՀ ՊՆ «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ
4.	18DP-1C005	Մանուկյան Արամ Սպարտակի	Մետաղ-ածխածնային նանոկառուցվածքների հիման վրա նոր սերնդի պաշտպանիչ կլանիչների մշակում և պատրաստում	Բնական գիտություններ: Ֆիզիկա և աստղագիտություն	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ